

ունէին, ինչպէս նաև հաս ու հոն քանի մը թերթեր, ինկած կորած են:

Աւետարանական հասուածներուն կից նշանակուած են Ամոնեան հին բաժանման նամարաթիւերը: Մարկոսի Աւետարանին վերջին հասուածը ունի ՄԼԳ [= ԺՁ. 8], որուն անմիջապէս կը յաջորդէ Եսայիայի փոփոխակը, որ Լ. Գ. Ճէրհանեանի հրատարակած 4 օրինակներէն տարբեր և շահեկան թարգմանութիւն մը կը ներկայացնէ:

Աւ եղև իբրև յարեալ ի մեռելոց, յաւաջնում միաշարաթևուղի ի վազորդեայնն, երևեցաւ նախ Մարիամ Մազզաղեանացոյ, յորմէ հանեալ էր այս և թիւ:

Աւ նորա երթալ պատմեաց, որոց զհետ նորա շրջեալ էին յառաջագոյն, որք զգայինն և լային զնա:

Աւ նոքա իբրև լուան եթէ կենդանի է, և տեսաւ ի նմանէն, շուառախին նմա, զի համարէին թէ տեսիլ ինչ էսես:

Աւ յետ այսորիկ երկուց ի նոցանէ այլովք կերպարանաւք երևեցաւ Յս. որ երթալին յազարակ:

Աւ նոցա զնացեալ պատմեցին այլոց եթէ տեսաք մեք զՏէր, և ոչ կամեցան և ոչ նոցա հուաւատալ:

Ապա յետ այսորիկ բազմեցելոցն ընդ ինքեան մտաւանդիցն երևեցաւ, և նախատեսաց զանհաւատութիւն նոցա և զխտաարտութիւնն:

Ձի որք տեսին զնա յարեցեալ ի մեռելոց ոչ հուաւատացին:

Աւ ասէ ցնոսա, զնացէք այսուհետև ընդ աշխարհ ամենայն, քարոզեցէք զաւետարանն արքայութեան իմա. որ հաւատա յիս և մկրտեսցի, կեցցէ. և որ ոչ հաւատասցէ գտաւապարտեսցի:

Աւ նշանք հաւատացելոց այսոքիկ զհետ երթիցեն:

Յանուն իմ զևս հանցեն, և լեզուս

ՀԱՅԿԱՎԱՆ ՎԱՆՔԵՐ

ԳԱՅԼՈՒ ԱՆԱՊԱՍ

ՎԱՄ

ՋԵՐՄԱՂԻԻՐ ՎԱՆՔ

Տեղադրուկուն. — Գայու Անապատը կամ Գայու Վանքը կը կոչուէր նաև Ջերմաղբիւր — երբեմն զրուած Գերմաղբիւր — Վանք և կը գտնուէր դաշտային կիլիկիոյ մէջ, Սիս քաղաքին մօտ: Եկեղեցին կը կոչուէր Ս. Աստուածածին:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ակնիքի Վանքին նման Գայու Վանքին ևս հիմնադիրը կը համարուի Մեծն Լևոն (1186—1219). — Սիսուան, էջ 537:

Այս Վանքին մասին մեզի հասած տեղեկութիւնները շատ ցանցառ են զժրարտարար: Այսպէս,

Ջերմաղբիւր Վանքի Վարդապետներէն Գրիգոր մասնակցած է Սիսի (1307) և Ատանայի (1316) տոգոփներուն:

Հոս Լևոն Գ. (1320—1342) դաստառուն մը հաստատած է (Սիս., 547: Խաչիկեան,

նորա խաւօսեցին, և ձեռաւք աւան բարձցեն:

Աւ թէպէտ և մահկանացու ինչ զեղս արբցին ոչ փնասեսցէ նոցա, և ձեռս գրիցեն ի վերա հրահաղաց և բժշկեցցին:

Աւ յետ այսց բանից, և աւուրք բազմաց, վերացաւ Յս. ի նոցանէն յերկինս և նստաւ ընդ աջմէ Աստուծոյ:

Իսկ նոքա ելեալ քարոզեցին ընդ աշխարհս ամենայն, Տեսան գործակից լինելով, և զհոգի սուրբ տալով նոցա, և զշնորհսն հաստատելով ի ձեռն զհետ եկելոց նշանացն, զաւրութեամբ Տեսան ի փառս նորա (էջ 179բ—181բ):

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ.

ԺԴ. Դարի Հայ. Ձեռ. Յիշատակարանների, էջ 209)։ Սակայն կէս դար առաջ ալ՝ հոս Վարդապետանոց մը գտնուած է, ըստ Յովհաննէս Գրիկ յիշատակութեան. — Մ. Արք. Սմբատեանց, Նկարագիր . . . Երնջակայ, էջ 310։

Ջերմադրուրի Վանահայրերու շարքէն սակաւաթիւ անունների միայն հասած են մեզի, այսպէս,

1. — Տէր Կոստանդին Բաբուցի, 1311. — Խաչիկեան, ԺԴ. Դարի Յիշատակարանների, էջ 76։

2. — Յովնաննէս Քահանայ, 1316. — Ձեռ. Ս. Յ. Թ. 2354։

3. — Լեւոն Վանահայր. — 1343ին, Մխիթար Գռնեցիի կաթողիկոսի գումարած Սնտի ժողովին ժամանակցողներու կարգին կը յիշուի Գերմադրուրի (Կէմէրկէկան) Վանահայր Լեւոն. — Աղգապատոււմ, յօդ. 1291։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Գայլու Անապատին մշակութային գործիչներէն և գործերէն շատ քիչ բան ծանօթ է մեզի, զոր կը ներկայացնենք ժամանակագրական կարգով։

Ա. — Յովհաննէս Գրիկ, 1273ին օրինակած է Անեսարան մը, մագաղաթի վրայ. — Երնջակ, էջ 310։

Բ. — Թորոս Քահանայ Լոռմկլացի, հմուտ Գրիչ, 1311ին օրինակած է մէկ Թուրքի Կաթողիկէացի, Վարդան Քահանայի ազաչանքով. — Խաչիկեան, էջ 75-6։

Գ. — Գրիգոր Դպիր, Գրիչ, օրդի Շահադուխտի և եղբայր Վասիլ Դպրի. 1316ին օրինակած է Շառակնոց մը, Վանահայր Յովհաննէս Քահանայի համար. — Ձեռ. Ս. Յ. Թ. 2354։

Դ. — Սիմէոն Քահանայ (1318-36), օրդի Մեծպարոնենց Յակոբ Քահանայի։ Օրինակած է,

1. — Շառակնոց, 1318ին, Ստեփանոս Դպրի ինդրանքով. — Հանդէս Ամսօրեայ, 1955, էջ 507։

2. — Մանրուսմունք, 1325ին, իր հոգևոր եղբոր՝ գրքակազմ Յովհաննէս Սարկաւազի համար. — Սիւ., 201; Խաչ., էջ 197-8։

3. — Մանրուսմունք, 1336ին, դեռագուսիկ և պատուական հոգևոր եղբայր Զաքարիային համար. — Սիւ., 201։

Ե. — Յովհաննէս Սրկ. Գրքակազմ (1325), որ թիւ 2 Մանրուսմունքի ստացողն է։

Զ. — Յակոբ Դպիր Նկարիչ (1325-36). — Վեդրոյիչեայ երգու Մանրուսմունքներու ծաղկողն է. — Խաչիկեան, Յիշատակարանների, էջ 290։

Է. — Խաչատուր Գպիր Երուսաղեմացի, կազմող (1325-36), որ վերագրեալ Մանրուսմունքները կազմած է. — Սիւ., 201։

Ը. — Առաքել Կուսակոն Քահանայ, Գրիչ (1328). — Ջերմադրուրի Վանքին մէջ օրինակած է Փիլոնի գործերը, Կրակկացի Յակոբ Վարդապետի համար. — Կար., 2046; Սիւ., 547; Խաչիկեան, էջ 209։

Թ. — Յակոբ Կրակկացի, որ իբրև գրաւէր Վարդապետ մը կ'իբրև վերագրեալ տոգերուն մէջ, մեզի կը ներկայանայ նաև իբրև հեղինակ իր հետեանալ գործերով։

1. — Ալլօրազիբ, որ ունի եօթ պուխներ, շարթուան իւրաքանչիւր օրուան համար սահմանուած. — Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս օրդի Աստուծոյ կենդանւոյ . . . — Ձեռ. Ս. Յ. Թ. 1462, Թդ. 58-125, նորագիր։

2. — Լուծմունք Դժուարիմաց Բանից Նիւստուցուն. — Ձեռ. Ս. Յ. Թ. 718, էջ 532-551։

3. — Լուծմունք Ճառից Գր. Ասուածաբանի. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1257, Թդ. 1322, էջ 1-342, վերջը թերի։ Կրնայ ըլլալ Կրակկացի Յակոբի և ոչ թէ Եւզոկիացի, ինչպէս ունի Սաւալանեան։

Ընդօրինակած է նաև Քաթողիբ մը, իրեն համար, կարևոր բովանդակութեամբ. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1279, էջ 2ևԲ, վերջաւորութիւն թերի։ Կը պարունակէ 33 քարոզներ, ընդհանրապէս՝ իրեն ժամանակակից հայ հեղինակներէ։

ՆՈՐԱՅԻ ԵՂՍ.

